

տուէլ մակերեւութի հաւասարութեամբն կամ անհաւասարութեամբն, իւր կարգի ընդհատութեամբն և պատառմամբն, զորս կարէ ներկայացուցանել:

Ղեկահասարակութիւն երկրի:—Այս գնահատութիւնն երկրի բնական զօրութեան, բնալուծութեան և տնկոյն համեմատ, զոր երկիրն ինքնին բաւարարանէ: Տեսանելաց և շօշափելաց ճանաչումն, երեսաց գոյնն, և շօշափմամբ մատանց վերայ կրթեալ ճնշումն կարեն մի խիստ և մածանող երկիրն որոշել մի որոշ երկրից, և տալ երկաթի ժանգի ներկայութեան կամ բացակայութեանն նշանակն և կաւճի և կրախառն երկրի յայտնութիւնն:

Արբ կամենաս ամենաճիշտ իմանալ բնական զօրութիւնս, պէտք է դիմել մանրադիտի և փորձոյ օգնականութեան, և տեղական ինքնաբոյս բուսոց տեսակաց բացայայտութեամբն և նոցա աճման կերպարանօքն երկրի բնութեան վերայ ունել մի քանի գաղափար. սակայն հետազօտութեան ամենաապահով առաջնորդն է բնալուծական լուծումն, բայց եթէ որ կամի պարզ փորձականութենէն առաւել ինչ քաղել, եթէ որ կամի առաւել ինչ կատարել՝ քան թէ հաստատել բուսաբեր հողոյ, կրի, պաղլեղի և կոպճի մերձաւորութիւնն, այն կոպճի, որ ոչ պահանջէ, եթէ ոչ առաջագրութիւն առ հուն՝ և բուսաբեր հողոյն բացայայտութիւն, պահանջէ կիրարկութիւն chlorhydrique թթուութեան, կրի բացայայտութեան համար, պահանջէ շրջումն ի փշի, և թափել աման յամանոյ, որպէս զի խիճն և պաղլեղն բաժանին աւազից և կաւից. եթէ որ կամի լուծեալ հողոյ կամ

նորա մէջ պատահաբար հանդիպած իրաց թիւն և ծանրութիւնն ճշտութեամբ զիտել, ոչ կարէ մերժել մին այսպիսի արարից խառնուրդն, որովհետեւ և ոչ կարեն լուծանել կամ գնահատել գոյութեանց հնդեպասանն կամ աւելին, քան զի մինչ ցարդ եղած եղանակներէն (methode) ամենէն կատարեալն է **Պ. Ղազի** եղանակն:

(Շարունակել)

Թ. ՅՈՎ. ՀԱՆՆԷՍ ՂԱՐԴԱՊԵՏ ԵՐԵՄԵԱՆ.

ՔՆՆԱԳՆՈՒԹԻՒՆ

ՊԱՐՈՆ ԲԱՅԵԼԻ «ՓՈՒՆԶ», ԲԱՆԱՍՏԵՂԵՌԹԵԱՆ ՎԵՐԱՅ:

Մերձ երեսուն տարի է, յորմէ հեռէ մեր գրաբառի և աշխարհաբառի մէջը սաստիկ պատերազմ է ծագած և անժխտելի է որ, վերջինս յաղթող կը հանդիսանայ, ձգելով իւր հիմը գրաբառի աւերակների վերայ*): Հետեաբար աշխարհաբառն էլ առ այժմ ունի իւր մէջն ամենամեծ հերձուածներ ու երկպառակութիւններ, ըստ որում իւրաքանչիւր գաւառի կամ երկրի ծնունդը նախագասելով իւր բարբառը, գուն է գործում իւր ոճն, բառերի հորովումները, բայերի խոնարհումներն ընդունել տայ միւսներին: Տաճկաստանի Հայերն էս մասին աւելի

(*) Ընդհակառակն՝ գրաբարին ընդհանրանալովն, Վասն զի ամեն տեղ աշխարհաբարն կմերձենայ գրաբարին, ասել է թէ գրաբարն վերակենդանաւորով պիտի ընդհանրանայ:

Հիմնաւոր յառաջ կերթան քան զթէ մէք Ռուսիաբնակներս: Արանք սկսեցին կոկել իւրեանց բարբառը, մերձեցնելով փոքր առ փոքր զրաբառին, ի բաց բառնալով այլազգական բառերն, որով և մերձենալի շինեցին միւս գաւառացիներին: Բնդ հակառակն մէք մոլորեալ մինչև ցայսօր չկարողացանք սեփականել մեզ մի ընհանուր բարբառ: Հատ անգամ մեր կողմի մի թերթ (Օրագրի մէջին գտնուեալ քանի մի գաւառական ոճեր, երբեմն զըրոց, երբեմն աշխարհօրէն հոլովումներ և խոնարհումներ բառերի և բայերի, զիտութեամբ տառասխալներ, մանաւանդ Ռուսերէնից, Ֆրանսերէնից, և Գերմաներէնից ողջ պարբերութիւններ բառ առ բառ թարգմանած ու հրատարակած առանց նրանց Հայացնելոյ, և որ առաւել քան զամենն աններելի է՝ յաճախ այլազգական բառեր, գործածուած—բառեր, որոց ճիշդ նշանակութիւնները կարելի էր գտնել մեր հարուստ լեզուի մէջին:

Բայց, որովհետեւ էնդունք գործածող պարոնները կամ իւրեանց ուսումը վերոյ յիշեալ ազգերի ազդեցութեան ներքոյ են ստացած և կամ առ ժամանակ նրանց մէջն են կացած, և կամ յերեխայութենէ անտի իւրեանց ծնողաց տանը մայրենի լեզուով երբէք չեն խօսեցած, այլ հետ զհետէ, նոր ի նորոյ սկսել են սովորել Հայերէնն, և այժմ իւրեանց մաքի ծընունդը չկարողանալով Հայ—բարբառով արտայայտել, վասն որոյ և զիմում են այլազգական բառերի, որով և իւրեանց երկասիրութիւնը անհասկանալի են առնում հասարակութեանը: Պան էս պարոններէն ոմանք, որ էս խօսքերը լսելիս,

արդէն պատասխանած են ինձ լեզուով, և ինչ զարմանք, որ այժմ ևս գրաւոր մի և նոյնը պատասխանեն թէ, ինքեանք ո՛չ թէ Հասկացող, անկիրթ ամբոխի, այլ ուսումնականների համար կգրեն, և թէ հնութիւնների երկրպագող չեն, փտած, հին հայկական բառերի վերականգնացնելը զժուարին սկզբունք է, էն բառերի գործածելոյ ժամանակն անցկացաւ, թէ Ռուսի նման երեւելի ազգը բառեր է փոխ առնում ուրիշ ազգերէ, հարստացնում օր ըստ օրէ իւր լեզուն, և ընդէ՛ր մէք փոխ չառնենք, մանաւանդ այլազգական բառերն աւելի քաղցր են և ախորժ լսելաց, զոր օրինակ Տօբնի, Տաղալայ, Բօման, Էն-Դալնի, Երեւալ, Բալ, Դո-դիկայ, Կանցա-ապ, Էպօլիպ, լիլիկական, Էթենդ, Դիլիպենպ, Բալապին, Էօմանական, օւելին, պանիօն, ևլն, ևլն, էսպիսի հարկւրաւորներ: Չէ՞ սա մին ազգային օտարամոլութեան ու նակութիւն: Լսէ՛ք: Աւելի աններելին այն է, որ ոմանք երբէք Աւրոպայ չեղած, Աւրոպացիների հետ յարակցութիւն չունեցած, նրանց լեզուն ըստ ամենայնի անտեղեակ, այսու ամենայնիւ կհետեւեն նրանց՝ որոնք Աւրոպացիների լեզուններն ուսումնասիրած են, և առ ի ցոյց տալ ամբոխին սնապարծութեամբ թէ ինքեանք ևս տեղեակ են էն լեզուններին, աւելի ևս գործածելոյ հետամուտ են, որպէս թէ զիտնականներ են, ուսումնականներ են, ևլն, ևլն, են:

Էս ուղղութիւնէն ծագումէ էն հետեւանքն, որ մեր լեզուն օր ըստ օրէ աղաւաղուելով, ո՛վ ոք ինչ գրումէ թէ բանաստեղծական թէ արձակ շարադրութիւն, չէ՛ լինում ընդհանրական, ուստի

և անմերձենալի հասարակ ժողովրդեանը, որ իւր լեզուի ճաշակը նոր ի նորոյ է սկսած առնել. և երբ պատահում է Նշարօպէական ոճերին կամ բառերին, ինքեան ըստ ամենայնի անըմբռնելի, խորտնումէ, յուսահատվումէ և չէ աշխատում այնուհետև ընթերցասիրել: Թիֆլիս մի խոնուծութպան պատմեց ինձ թէ, մի տարի տորադրուեցայ մի (Օրագրի*), տեսի շատ անգամ ո՛չ ինչ չեմ հասկանում նրանէ, թոյլ տուի, որովհետև ո՛վ է տուել ինձ էնքան դրամ՝ որ Ռուսերէն, Ֆրանսիերէն, Անգլերէն, ու չեմ գիտի ինչերէն բառգիրքներ գնէի, որպէս զի անց ու դարձ անողներին խնդրէի, քրքրէին բռնարանները, գտնէին նրանց լեզուի բառերն ու ինձ հասկացնէին:

Եթէ էն պարոնները կամենում են աշխարհիկ լեզուն ընդհանրական ու մերձենալի հասարակ ժողովրդեանը լինի, և նա ընթերցասիրէ, պարտաւոր են, ըստ իմ խոնարհ կարծեաց, շատ—շատ քիչը, մինչև էս դարի վերջը պարզ, անխառն այլազգական բառերէ զրեւն ու փոքր առ փոքր**) ընտելացնեն նրան մեր հին ու խորթ բառերին, և ո՛չ թէ ցոյց տան թէ ինքեանք Աստինագէտ, Ռուսագէտ, Ֆրանսիագէտ, Ղերմանագէտ են, նրանց բառերն անխառն գործածէ ըստ քմաց

խրաքանչիւր ոք, որեցն անշուշտ մին էլ աչքերնիս բաց կանենք, կտեսնենք ներկայացած Աստինա—ձայ Քանեցւոց ժամանակն, որոնք միջին դարերում ազաւաղեցին մեր գրականական լեզուն մինչև յոյժ, և փոքր ինչ ժամանակ նրանց ազդեցութիւնը տարածուեց ինչ ինչ վանորէից կրօնաւորների վերայ անգամ. բայց երբ զգացին էս սխալանքն, այնուհետև ո՛չ մի հեղինակ չհետեւեց նրանց, այլ ամենայն ոք գուն էր զործում հետեւել բուն մեր ոսկեդարի ոճին և կամ ձայոց սեփական ոգւովը գրել:

Բայ ի վերոյրեալ թերութեանէն, կայ մեր այժմեան գրականութեան մէջին այլ էս մի նուրբ և վսեմ հարց, որի վերայ հարկաւոր էր երկարօրէն խօսել, բայց էստեղ համառօտաբար ասենք, այս ինքն՝ անզանազանաբար յարձակուել մեր եկեղեցականների վերայ, որպէս թէ նոքա ձայ չեն, շնորհաստանէն կամ Աթրիկայէն են եկած մեզ հովուել, կամ թէ նրանք մեր մէջէն չեն ընտրուած և չեն պտուղ մեր չար կամ բարի գործերի: Ես յարձակումներէն հետեւումէ անկիրթ ժողովուրդի հակալրութիւնն ընդդէմ մեր դարաւոր եկեղեցական աւանդութեանց, և մի և նոյն ժամանակը մեր Արօնին, և հետզհետէ *) հաւատափոխութիւն և

(*) Զեմ կամենում յիշել էս տեղ օրագրի անունը:

(**) Քանի մի անգամ պատահել է խօսել էս նախադասութեան վերայ, և ինձ ոմանք պաշտպան են դուրս եկած, և ոմանք մեղադրած, որ էս պարզ աշխարհիկ բարբառով կը գրեմ, և որպէս թէ իմ լեզուն չէ գրականական և թէ վերացեալ բառերէ զուրկ է:

(*) Թէ և անուսումն բայց բնական խելացի մի ծնունդի մօտիկ օրերս ասեց ինձ թէ՝ «Մեր ու մահամետականների միջին երեք դիւաւոր զանազանութիւններ կային, այս ինքն մեք պատկաւահէինք, մին կին կառնէինք ու ժամ ու պատարագ ունէինք: Հիմիկուան ուսեալ երիտասարդները մեզ քարոզումեն թէ՛ պատն ո՛չ ինչ է, մեր հոգեւորականները մեզ խաբել են մինչև ցայ»

անհատաութիւն անդամ: Աս չեմ արդարացնում մեր ոմանց եկեղեցականներին անբարոյականութիւնն և անկրթութիւնն, և քաւ մի՛ լիցի թէ ասեմ, չաշխատել ուղղել նրանց, բայց ասեմ, ո՞ր ազգի մէջն չեն եղած և այժմ ևս չկան էնպիսի հոգեւորականներ, մերերիցը շատ—շատ վատերն, արդեօք էն ազգի խելացի և մտածող դասն առանց իւր ազգի ամբոխի մտաց զարգացմանն և յառաջագիմութեան, անխտիր յարձակուել է կամ յարձակում է՞ իւր անկիրթ հոգեւորականութեան վերայ: Մեր ուսումնականներէն ոմանք ցանկանում են քսան—երեսուն տարուայ կրթութեան ձեռնամուխ եղած անտէր, անտերունջ ժողովուրդի հոգեւորականներին յանկարծ հաւասարացնել հոգեւորականութեանը թագաւորեալ և լուսաւորեալ Աւրօպացիներին, որոնք չորս—հինգ դարերէ հետէ

սոր, պսակն այսուհետեւ աշխարհականը պէտք է կտրէ, երբ կամենանք կարող ենք մեր կինը փոխել, և թէ ժամ—պատարագը, ծունր գնիլը աւելորդ բաներ ելն: Ապաքէն եթէ արդարեւ նրանց ասածները ճշմարիտ են, ուրեմն մեր հայրերը պապերը կամ մէք ինչի՞ արդեօք յամառուած մինչև ցայսօր չընդունելով մահմետականութիւնը էսպէս զրկուած արհամարհուած մնացած ենք Պարսիկների միջին, այն ինչ ո՞չ հաց թխողութիւն, ո՞չ նոյարափառութիւն, ո՞չ մրսագործութիւն, ո՞չ կոշկակարութիւն, ո՞չ որմնադիրութիւն, ո՞չ մշակութիւն, ո՞չ ինչ արհեստով չենք կարողացել պարապել բաց ի ոսկերչութենէն և հիւանդութենէն: Էստոնցով պարագոյններն էլ էնքան շատացել են, որ այժմ իւրեանց օրուան հացը ձեռք բերելը զժուարացել է՝ վասն որոյ և շիկքներն ծռած մնացած են ու զորմէ լի լինեալում: 11

գուն են դործում, և հազիւ թէ իւրեանց եկեղեցականները հասցրած են ներկայ վիճակին, որ դարձեալ կատարեալ չէ: Երբ դարեւ գովելի է պարոնների ցանկութիւն, և որ չայլ չէ՝ շտապում և ցանկանում արդեօք նրանց քարոզածը տեսնել, բայց պէտք է կարի մեղմութիւնով և քայլ առ քայլ լինի, ըստ որում էսպիսի սկզբունքներ տարածելն առանց շրջահայեցողութեան և հեռատեսութեան՝ շատ—շատ կանուխ է մեր անկիրթ և անդարգացած ամբոխի համար, և բնականօրէն զանազան տիրապետող ազգերի ներքոյ, որոց քաղաքականութեան աւելի յարմար և օգտաւէտ է տեսնել չայ եկեղեցականներն արհամարհեալ չայ անկիրթ հասարակութիւնէն, որպէս զի առաւել ևս դիւրութեամբ հաւատաւորութիւն լինի: Որքա դառը հեռանքն և տխուր փորձն արդէն ապացուցանվում է ինչ ինչ անդ, և անշուշտ գնալով, գնալով սաստկանալոց է: Համառօտ մէջ բերած փաստերս ո՞րքան և չնչին ու անընդունելի լինին յարձակողներէն, այսու ամենայնիւ վսեմ հետեանք ունին, և արժանի են առաւել ևս Պարոն Խմբագիրների ուշադրութեանը, որոց Օրագիրները կը յաճուին հասարակութեան ձեռքումը:

Ասպիսի քարոզիչներն ի հարկէ համարում են ինքեանց լուսաւորութեան, քաղաքականութեան և կրթութեան աստիճանին հասած, և գուն դործում իւրեանց վեր ի վերոյ գրուածներովն ազդեցութիւն գտնել ազգի վերայ, և խոնարհեցնել նրան որ և իցէ ազգային հարցերի մէջն իւրեանց հասկացողութեան և զաղափարներին ու բռնադատութեամբ

էլ էն նախապաշար հարցերն ընդունել տալ, բայց չեն մտածում որ, էսպիսի ցանկացողները, հետամուտ կողմերը, մեծամեծ ձեռքերի տէրեր պիտի լինին և իւրեանց ազգի դրութեանը մանրամասնաբար տեղեակ, իսկ տարաբախտութեամբ նրանց վեր ի վայր հմտութիւնները զանազան առարկաներէն և իւրեանց ազգի վեճակէն ապացուցանում են թէ, նրանց լուսաւորութիւնը միայն զբքերի մէջն են կարգացած, և որպէս երևե ի մինն ասեց, զիս ևս էնպէս ինքեանց ստացուածք չեն արած, որովհետեւ նրանց քարոզածներն են նկարագիր իւրեանց թերակատար լուսաւորութեան, իսկ արհամարհանօք հայրն անցեալների վերայ՝ է թեթեամիտ զմայլուած գոլը ներկայ դարի ու կոյր ձգտող կիրք՝ ամեն նորութեան վերայ, որ ըստ ամենայնի հակառակ է իւր ազգի ներկայ դրութեանը: Այլ իւրին է քարոզին, բայց գործով ցոյց տալն, ապագայ ազգային օգուտները նախատես լինելն, ուղիղ ծանապարհով ժողովուրդ առաջնորդելը, կարի դժուարին պաշտօններ են և մեծամեծ պատասխանատուութեանց ենթակայ: Այլ որ կամենում է առաքեալ ճշմարտութեան լինիլ, պէտք է աշխատէ հետեւել Սոկրատի երևելի աւածին թէ, «որ ո՞ք կամի յառաջ մղել զամենայն աշխարհ, նախ քան զամենայն մղեսցէ յառաջ ինքն:»,

Այլ որոյշեալ երկու վնասների և ևս զարգանալոյն, յառաջ օգէմ լինելոյն, տաժիչ և զօրավիգն է էս տարի Թիֆլիսումը տպուած «Փունջ», ասացեալ Բանաստեղծութեան առաջին հատօրն, որ էս օրերումը պատահեց ինձ ընթերցուիլ, և

որ պէտք է համբալինելի, օրիորդների, երիտասարդների, քաղաքացիների և զհեղացիների ձեռքումը յաճուի, և անշուշտ աղաւաղէ ո՛չ թէ միայն նրանց զրաւանութեան ճաշակն, այլ և՛ որ առաւել քան զամենայն ցաւալին է՝ և բարոյակաւ նութիւնը. վասն որոյ մտադիր եմ՝ ո՛ր քան կարելին է՝ համառօտաբար իմ խոնարհ կարծիքը ներկայացնել մեր Հայ-ուսումնական դասին, և «Փունջի», պարոն հեղինակին: Անշուշտ սա ևս կը վկայէ, որ ամեն ոք ունի կատարեալ իրաւունք քննել ո՛ւմ և իցէ, ինչ և իցէ հեղինակութիւն, և ասել բացարձակապէս իւր կարծիքն: Այլ էն քննութիւնը սխալ է կամ ուղիղ, հետեւանք է նրա համոզմանը. վասն որոյ հակառակորդը կարող է արտայայտել իւր համոզմունքն ու ջրել նրա կեղծ կարծիքը կամ համոզմունքը:

Պատուելի հեղինակը կամենալով օրիորդների և երիտասարդների համակրութեան արժանի անէ իւր «Փունջն», առաջին իւր բանաստեղծութիւնը «Առեւր», վերնագրով ընծայարեումէ օրիորդներին. և նրա միւս երեսի վերայ «Այլքը Հայաստանէն», մի պարբերութիւն է ուղղում երիտասարդներին էսպէս, «Չե՛զ եմ ասում ձե՛զ, Հայոց նորահաս երիտասարդք, ձե՛ր անունին մեռնեմ ե՛լն: Այնուհետեւ նա սկսումէ նախ և առաջ նկարագրելով քանի մի կանանց անհատնելի անբարոյական վարքն ու բարքը, հետ զհետէ ներկայացնումէ անպարկիշտ պատկերն ընդհանուր կանանց սեռի պարկիշտութեանը, որն որ աւելի դայութակղիցուցիչ են քան օգտակար գողարիկ սեռին: Ա՛յ արդեօք ագնիւ և բարե-

սնունդ տան—ախիկներ կամ տղամարդը թող կտայ մտնէ «Փունջն», իւր գերդաստանի մէջը. տես երես 16, 17, 18, 23, 55, 57, իւր կէտադրութեամբն, 64, 65, 111, 115, 116, 117, 118, 121, 122, 123, 126, և ըն, և ըն, :

Ասած է, իւրաքանչիւր գրքի յառաջաբանութիւնը պէտք է ըննի հայելի կամ համառօտ բովանդակութիւն հեղինակի երկասիրութեանը, բայց ես էս նախադասութիւնը չեմ ընդունում: Բայտ որում Փունջն պարօն հեղինակը յառաջաբանութեան մէջին վսեմ միտք յառաջ բերելով, արդարացնում է մեր մանուկ սերունդն, ասելով «չունիմք մեք Հայերս ընթերցանութեան գրքեր . . . իսկ ընթերցանութիւն տարածել ամբողջ մէջըն են բանաստեղծական և վիպասանական գրուածքներ, և փոքր ինչ զկնի կասէ «տեսնումենք, թէ քանի ախորժանօք նոքա (ամբօնն) լսումեն աշուղների հեքիաթները և որքան սիրով կարդումեն Պղնձէ քաղաքի յիմար առասպելները կամ Խիկար իմաստունի խրատները: Արովեանցի «Վէրք Հայաստանի», թէ և նա գրուած է մի դաւառի ժողովրդեան բարբառով, որ հասկնի չէր ընդհանրութեանը . . . ուրեմն . . . մեղաւորքը մեր գրագէտներն են, որ նրանց մտաւոր սնունդ չեն մատակարարում, և ըն, : Ապաքէն պարօն Բաֆֆին էստունք ասելէն յետոյ, ի հարկէ պարտաւոր էր էս խրատներն ինքն զգուշութեամբ պահպանէր, որպէս զի իւր երկասիրութիւնն ընդհանրական չէր, ինչպէս և կը յուսայ: Այժմ տեսնենք նա պահպանել է կնդուհը արդեօք:

Հանգուցեալ Արովեանը գրած էր իւր գաւառի, ասենք, ժողովրդի համար, իւր ժամանակի կենդանի և խօսուն բարբառովը, դոնէ Արարատի բնակիչները կը հասկանային կամ կը հասկանան էն կատարելագէտ, թէ չասենք ուրիշ գաւառացիները, բայց պարօն Բաֆֆին ո՞ր գաւառի բարբառն է ինքեան «Փունջն», մէջը սեփականած, չէ երեւում: Որպէս գրող չէ, նոյնպէս էլ չէ Տաճկաստանի կամ Պարսկաստանի Հայերի աշխարհիկ լիզուովն, ինչպէս էլ չէ Արարատեան կամ Պարազդի կամ Շամախիի բարբառներովն:

Առանձին մի վսեմ հարց ևս կայ էստեղ: Արգեօք պարօն Բաֆֆին իւր «Փունջը», ո՞ր գասակարդի մարդկանց համար է երկասիրել: Յայտնի է ուսումնական դասի համար չէ, որովհետեւ նա քիչ է դարձրած իւր ուշադրութիւնը բանաստեղծական կանոններին, զոր օրինակ, երես 13:

«Նա ածումէ, նա երգումէ,

Ներկայացնումէ և պարումէ.

Չաղրական պատկերներ,

Խաղիւղում է, նկարում է, . . . :

Նըրեմն նա ծանր էր,

Որպէս մտածող զիտնական, :

Հարցնում եմ, ի՞նչ էր նա ածում կամ ի՞նչ ներկայացնում: Հայը էստունք չի հասկանալ: Որքան յաճախ տեղ էսպէս ստերը պակաս կամ աւելի են պարօնի բանաստեղծութիւնները: Բայց ի սրբանէ, ասենք, ամենաչնչին բանահիւստական կանոնէն նրա շեղուիլն, որ մեծ պահասութիւն է բանաստեղծութեանը և կաղացնող, այս ինքն բաղաձայն տառ՝ ը, վանկերի մէջը կցին, որպէս զի չափա-

բերական լինէր և յկրկնուէր տողը, նա չէ պահպանած կամ թէ չէ իմացած, որ էս ամենահարկաւոր է մանաւանդ երբ կարգացողն է անուսում ոմն: Օր օրինակ, երես 13:

«Ժամը զարկեց տասն և մէկ,

Մեր տիկինը քնքշիկ

Հայելուց չէ հնռանում,

Սանրում է իւր մազեր,,:

Որքան կաղացնում է և անհամացնում բանաստեղծութիւնը ԳԻՆԻ և ԿԱՆԻՐՈՒՄՔ ԲԱՌԵՐՍ առանց ը տառի, մանաւանդ վերջին տողը ինքն ըստ ինքեան մի վանկ պակաս է:

Ինչպէս գրոց լեզուում տառերը Կ, Ն, Կ, նոյնպէս աշխարհիկ միջին տառերս ը, Կ, մեծ դերեր են խաղում, երբեմն բառը Ուղղական, երբեմն Հայցական, և երբեմն Ներգրական շինելով. բայց «Փունջի», միջին նրանք շատ անգամ ո՛չ ինչ նշանակութիւն և կանոնաւոր պարտաւորութիւններ չունին, երես 155:

«Կինը թողեց ամուսին,

Տիրեց ախար ժանտախտին,,:

Երբեօք կինը թողեց զամուսինը, թէ ամուսին գլխինը: Եւ թէ «տիրեց ախար ժանտախտին», էս ևս անհասկանալի է այս ինքն Հայերէն չէ: Երես 9:

«Օր և մանուկ պատանի, լինին
նորան երկրպագ,

Եւ քաղցրախօս բառերով, ողջունեն
իմ հրեշտակ,,:

Իմ հրեշտակ: Եւ էր ասել էր, իմ հրեշտակը կամ թէ զիմ հրեշտակ, թէ և միշտ մի վանկն պակաս կլինէր: Երես 47:

«Եւ զգեցանք մեր հագին, մազէ
քուրծը սեւթոյր,,:

«Օգեցանք մեր հագին,, չէ Հայերէն: Հագին նշանակում է հագած կամ հագումը եղած. զոր օրինակ՝ հագին կապայ ունէր՝ այս ինքն կապայ էր հագած, ուրեմն ըստ «Փունջի», ասել է, մեր հագումն և զած սեւթոյր քուրծը հագանք: Եր. 63:

«Մեծ ցաւ նորան տանջում է,
ցաւն ամուսնի դարտից . . . ,»

Պարոն հեղինակը ի՞նչ է կամենում ասել: Մի միայն սա շարամանութիւն է բառերի: Երես 7:

«Եւ կուսակրօն սրտումը, նոր նոր
կրքեր են խաղում,,»

Սրտումը, այս ինքն սրտի մէջին, շատ լաւ, բայց ինչե՞ միւս տողումը ինչպէս և շատ տեղ կասէ,

«Օղբացնում է, ի՞նչ գլխում,
ստեղծում է եղեալ,,»

Ինչե՞ էստեղ ԳԼԽՈՒՄՔ ԲԱՌԵՐՍ առանց ը կամ Կ տառերի կասէ, որ նոյնայանգութեան համար չէ պակասացրած, որպէս վերեն ասեց, «Եւ կուսակրօն սրտումը,,» Միթէ չէ՞ր կարող ասել «զոլացնում է գլխումը, ստեղծում է իղեալ, որպէս զի Քերականական կանոնէն չէր շեղուել և միտքը պարզ ու ամենի համար հասկանալի էր եղած: Ի՞նչ բառն էլ էստեղ ասելորդ էր, ըստ որում ներգործողը մի անձնաւորութիւն է:

Պարոն հեղինակը մինչև հինգ հարիւր անգամ այլազգական, ամբօխին անմատչելի բառեր է գործածած, զոր օրինակ, երես 22:

«Հատուկոր ֆրազներ, սերտած
մօտնի խօսքերուն

Համարում են այիթներ, բարձր վը
սեմ մաքերուն,,:

Տե՛ս, քանի՛ տեղ բառերի մէջնն՝ ք
տառն է պահաս, և չորս շարքումը այս ինքն
մին տան մէջնն երեք այլազգական, էնդունք
էլ վերացական բառեր կան: Արեւ 58.

«Աւր տանումը այն գիշեր, Նինոն
տալիս էր վեշեր,

Պառաւք խաղում են լոռօ, պար են
գալիս ջէհիւներ,»:

Պառաւք: Սնանիք թէ տղամարդիկ էին
պառաւներն *): Այլազգական բառեր նոյն
նայանդութեան համար կոխել բանահիւ-
սութեան մէջն և անուանել բանահիւ-
սութիւն: Թող ամենայն բանասէր մտա-
ռութեամբ կարգայ և խոստովանվի, ար-
դեօք էսպիսի բանաստեղծութիւնը կա-
րելը՝ է ընդունել իբրեւ բանաստեղծու-
թիւն: Ո՞ր ամբօխի կամ հասարակութեան
համար են սոքա, ո՞ր տեղ էր կամենում
հեղինակն ընդհանրական անէ իւր երկա-
սիրութիւնն, որի մէջը խառը — խուռը
սփռուած են այլազգական բառեր, ոճեր,
ընդդէմ Վերականական կանոնների հոլո-
վումներ և խոնարհումներ բառից և բա-
յից, մանաւանդ երբեմն էս, երբեմն էն
գաւառի բարբառայ փոխ առած մի և նոյն
տան մէջնն, որիցը կը մակաբերուէի թէ
«Փռնէջն», առաւել ևս չէ անուսում դա-
ռակարգի համար, որին ո՛չ թէ էն վերա-
ցական՝ այլազգական բառերը չեն հաս-
կանալի, այլ և հեղինակը ջատագով է հան-
դիսանում լիւտերական կրօնին (երես

175), որի մասին անյարմար եմ համա-
րում էստեղ կրկնել:

Պարոն հեղինակն երկար ժամանակ
ԹԻՖլիսի մէջը բնակուած, էնտեղի բար-
բառն ևս է աններելի աղաւաղում: ԹԻՖ-
լիգիցին՝ է, ո, ու, ք, տառերը կարտաբե-
րէ է, կամ է, օ, կամ ու, յ, է, որոնք չըն-
չին ուշադրութեան էին հարկաւոր, եթէ
չասենք բառերի հոլովման ու բայերի խո-
նարհման մէջնն որքան կը սխալուէի: Մին
քանի օրինակը բերենք: Արեւ 119 ասում
է նա:

«Պէկէն ու Նատաշան, էս նոր
մօղնի նոր շորով,

Արէկ շիկով հագնուած պարտում
էին փողոցով,»:

Պէտք էր ասել էր,

«Պէկէնն ու Նատաշէն, էս նուր
մօղնի նուր շորով,»:

«Արէկ շիկով հագնւում, պար-
տում էին փողոցումը,»:

Աւելի լաւ կլինէր թէ ասել էր, «Աս
նուր մօղնի շուրերով,» երբ մօղնի էր
նրանց շորերն՝ ի հարկէ և նոր կլինէր: Նա
ասում է «պարտում էին փողոցով,» կը
նշանակէ փողոցը շալակած կամ կտան
տակին և կամ փողոցի հետն էին պար-
տում: Արեւ 197.

«Պազանդարներ ունէինք, ամէն-
քը լաւ լաւ աղայ,

Նրանց հաան էս բժուկում, ով է
առի իմ աղայ,»:

«Լաւ լաւ աղայ,» ոչ թէ միայն ԹԻՖ-
լիգու լեզուով, այլ և ոչ մի գաւառի, (և
ոչ իսկ մեր գրոց լեզուով): Այդպէս չի
ասուել: Հայերէնում երբ ածականը
կրկնուէի, երբեմն «չաա», և երբեմն «զա-

(*) Պառաւք բառը ընդհանրապէս (ծերացեալ)
կանանց ասել յատկացած է, բայց կան մի քա-
նի կողմեր՝ յորս Ժէրաշ և պառաւք խօսքերը
անխտիր կգործածեն երկու սեռին համար ևս:

նազան կամ տարբեր կամ շատ տեսակի, է նշանակում, ուստի և պահանջում և միշտ գործ է ածւում նրա զոյականը յողնակի թուով: Չեն ասում լաւ լաւ տղայ ունի, — մեծ մեծ տուն տեսայ, — սիրուն սիրուն ծաղիկ, այլ մեծ մեծ տներ տեսայ (շատ մեծ — տներ), սիրուն սիրուն ծաղիկներ (զանազան սիրուն ծաղիկներ), սե սե մազեր (շատ սե մազեր), լաւ լաւ աղերք (տարբեր զանազանութիւնով կամ ամեն մինը մի տեսակ լաւութեամբ): Ուրեմն պէտք էր ասել էր,

“Սաղանդընիր ունէինք, ամէնը լաւ լաւ աղերք:

“Նըրանց հաար էս ժուկում, ո՞վ է տըվի իմ աղէք,:

Կամ ասենք աղայ. թող նրա ասածը լինի. բաց ի էս խոշոր զանազանութենէն՝ թիֆլիզեցիք ըստ-հո՛ւմ բառ չունին, այլ թս-հո՛ւմ, կրճատած թամանակ բառէն: Կոշտ սխալմունքներ է անում նա բայերուն, զոր օրինակ, երես . . . :

“Բէշալ — Գառչո՛ն էր մէկը, ամէնքը լաւ կու ճանաչին,

Ո՞վ կարայ ածիկ հիմայ, նրա թառն ու քամանէն,:

Պէտք էր ասել էր, Բաշալ Գարչոն էր մէկը, ամէնը լաւ կու ճանչնէնան.

Օ՞վ կանայ ածիկ հիմի, նըրայ թառն ու քամանէն,:

Եթէ սկսէ որ “Փունջի, թիֆլիզեցւոց լեզուն մաղմաղել, կարելի է ասել որ՝ շատ քիչ տողեր առանց սրբագրելոյ կմնան:

Ըստ որում զըրոյքը թիֆլիզեցւոց բարբառի վերայ եկաւ, վասն որոյ պէտք չէ լռել. այս ինքն 1870 ամին թիֆլիս ամ

ւարտած էի ես էն տեղի բարբառով, արձակ ոճով մի յօդուած էս վերնագրով “Կտակ, և սկսած էսպէս, “էս անդիրձը զըվեցաւ քաղիումը, ևա, մին կին հասուց քօնիկօնին, զվինօրիսթվի տաղերիքումը: Լստու տակը ձիւք քաշող դէգէվուէլ էլ մամէվուէլ էլ հին քաղիցի, ևւն, ևւն:

Եւ ինչպէս մտիս է զալիս, մի և նոյն ամեն մին օր պարոն Բաֆֆին էլ ներկայ էր երբ ուսումնական պարոն Աննեքերիմ Երծրունւոյ բնակարանումը կարգացի իմ գրածը. քանի մի օր անցնէին յետոյ Պ. Բաֆֆին խնդրեց ինձանէ էն տեսակը, որ տանէ մտառութեամբ կարգայ ու վերադարձնէ: Եւսէն աւելի պահեց, և քանի մի անգամ պահանջելէն յետոյ, վերադարձրեց Պարոն Երծրունւոյ միջնորդութեամբ: Ե. յժմ տեսնում եմ, որ նա իմ յօդուածէն ծաղկաքաղե նման արած “Փունջ, երես 92, “Կտակ, և եր. 95 “Թիֆլիզեցւոց յիշողութիւն, վերնագրերով ու լոյս ընծայած:

Բաց ի սրանէ՝ ուսումնական Պարոն Սամուէլ Գիւլլատեանն ինչի երկու գըրկոյքներ, որոց մէջին բովանդակուած են նրա բանաստեղծութիւնները, թէ գրոց՝ թէ աշխարհիկ բարբառով: Եւսջին գըրկոյքի մէջին կայ մին բանահիւսութիւն երես 81՝ “Սուգ գերութեան Բաբելացւոց, վերնագրով, միայն երեք տուն օրինակուած ու տակին գրուած՝ “մնացեալը կորած է,:

Եւս գիտովն Բաբելոնի, նըստեալ ողբամ դառն ի կոծ,

Ըզքիզ Սիօն իմ հայրենի, ո՞վ լոյս աշաց դու իմոց:

Ռադիկըտուր քննար Վաւթի, կա-
խեալ զուռեաց Սենարայ,
Շամբ եղեգանց բաղխեալ հնչէ, ինձ
զոյբ սըգոյ Սաղիմայ:
Յե՛րբ ի շղթայս յայս ժանգահար,
ընդ անծանօթ աստեղօք,
Ռուր կարդայցիմ, և վայրապար
արկից արտօսը և բողոք,:

Իս բաղդատելով «Փունջի», մէջը ար-
պուած երես 142 «Խորայէլը Բարիլոնու-
մը *), իրանահիւսութեան հետ, կը տես-
նէ կարգացողը ծաղկաքաղի նմանութիւն:
Պարոն Վիւլզատեանի երգերը դեռ ևս
գրկոյքներէ մէջ չամփոփուած, առանձին

առանձին թերթերի վերայ գրուած,
թաւրիզի վարժատան աշակերտների ձեռ-
քում կը յաճուէին, էն ժամանակն իւր
«Սուգ դերութեան Բարեկացւոց», վեր-
նագրով երգը կորել է, և յետոյ նա յուշ
բերելով երեք միայն տունը գրել է գր-
կոյքների մէջին: Բաց ի սորանէ՛ նորա եր-
գերի շատերը ընկած են պարոն Բա՛ֆֆիի
ձեռքը, ինչպէս կապացուցանեն իւր եր-
կու երգերն, որոնցից նոյնպէս քաղուածք
է արած. զոր օրինակ պարոն Վիւլզատե-
անի երգարան, Ե. հատոր, երես 112,
«Պանդուխտ Հայուհի», վերնագրով կըս-
կըսէ այսպէս:

«Որբ աղձիկ եմ ես պարոն, մեծ
մեծ սիրուն աչքերով,

Հայ օրիորդ եմ ես պարոն, սև սև
կամար ունքերով,

Պանդուխտ ծիծառն եմ ես պարոն,
սրտախորով եմ սիրով,

Ընկած օտար մութն սարեր, շրջիմ
սուգի սևերով. . . և ինչ,:

Իսկ միւսն Բ. հատոր, թերթ 11, «Որբ
Հայի աղձիկ», վերնագրով այսպէս կըս-
կըսէ:

«Որբ օրիորդ եմ ես բալամ, մեծ
մեծ կամար ունքերով,

Խեղճ օրիորդ եմ ես կուլամ, սև սև
սիրուն աչքերով.

Սիրոյ սիրոյն հրեշտակ եմ ես, փունջ
ոսկեթել մագերով,

Երկնից երկիր իջել եմ ես, ջուխտ
լուսեղէն թւերով.

Ինձի համար մութ տեղ չկայ, ես
աշխարհի արևն եմ,

Ինձի համար գիշեր չկայ, ես երկնքի
լուսնեակն եմ. . . և ինչ,:

(*) «Խորայէլը Բարիլոնումը», ասել պատմա-
բանական սխալ է: Սողոմոնից յետոյ Հրէից 12
ցիղիցն երկուքն առանձին թագաւոր (Երուսաղէ-
մում) և առանձին ժողովուրդ եղաւ, որ և կոչ-
վում էր միշտ «Յուդայ», կամ «Յուդայեան»,
անունով, զանազանելոյ համար միւս (Սամարիա-
յի) տասը ցեղի թագաւորից և ժողովուրդից, որ
իրան նախկին անունով կոչվում էր միշտ «Իս-
րայէլ», կամ «Խորայէլեան», Էս երկու թագա-
ւորութեանց կործանուելն ու գերի գնալը մօտ մի
դար յետ ու առաջ է իրարից: Նախ Սաղմանա-
սար Ասորեաց թագաւորն Իսրայէլին (տասը ցե-
ղին) գերի արեց ու բնակեցրեց Ասորիքումն Եփ-
րատի միւս ափերումն (յայնկոյս Եփրատայ): Իսկ
Յուդային (երկու ցեղին) մերձ հարիւր տարի յե-
տոյ Նաբուգոդոնոսոր Բաբելացւոց թագաւորը գե-
րեց և բնակեցրեց Բաբելաստանի Քօբար գետի ա-
փերումն: Ուրեմն Իսրայէլը Բաբելոնումն չէր, այլ
Ասորիքումն Եփրատի ափերումն: Էսպէս էլ սուրբ
գիրքը «Բաբելացւոց գերութեան», ժողովուրդին
միշտ կոչում է «Յուդայ», իսկ Ասորեացը «Իսրա-
յէլ», պատմական պարզութիւնը չչփոթելու հա-
մար, և Աստուածային պատգամներն՝ որ մի ցե-
ղերի բաժնին վերաբերիլը յայտնելոյ համար:

Այլ խնդրէի ամեն անաչառ ընթերցողէն, էս վերոյգրեալ երեք երգերի քանի մի տունը միմիայն համեմատէր պարոն Բաֆֆիի «Փունջի», երես 105՝ Հայ օրիորդ, երես 127՝ Որբ օրիորդ, — 142, «Իսրայէլ Բաբելոնումը», վերնագրով երգերի հետ, և վերակնքէր պարոնի տունը էն հեղինակի կոչմամբ, որ ուրիշի մտաց ծնունդը կը իւրացնէ առանց յիշելոյ ուստի է քաղուածք արած:

Չարմանայի է, «Փունջի, Բանաստեղծութիւնների մէջն տեսնում ես երբեմն մի երկու տուն փքուած, ուռած վերացական բառերով մտքեր, մին էլ յանկարծ այլազգական բառերով և ոճով ու աննշան Հայ—բառերով խոնարհած մինչև յոյժ կամ փոխադարձաբար, զոր օրինակ, երես 108:

«Ես չեմ սիրի սովաքար, ու
չեմ գնայ բաղազին,

Որ Եստուծոյ ողջ օրը, զօռ է տա-
լիս իր դազին,

Եւ գիշերն անհանգիստ, նրա չօտքի
չըկչըկոց.

Մարդի զահլայ է տանում, դաֆ-
թարների ողջ կապոց.

Գնա, կորչէ, սովաքար, իր փողի
սունդուկներով,

Նրա արծաթը չէ բերում, այրուած
սրտիս հանգիստ զով,»:

Փոքր ինչ էս անդ զկայ առնունք: Վեց տողումն եօթն այլազգական բառեր կան: «Եւ գիշերն անհանգիստ նրա չօտքի չըկչըկոց», էս անդ միջակէտ է: Գրած, ի՞նչ է կամենում սրանով, ասել, անյայտ է, չունի բայ. ապա թերևս ասելովն «մարդի զահլայ է տանում դափտարների ողջ կա-

պոց», սրա բայն վերաբերում է վերնոյն, էն էլ որ գաւառական լեզուով է արգիօք, այն ինչ է, կամ ն տառերն չեն կցած չըկչըկոցի և կապոցի հետ: Գնա, կորչէ՛ շեշտելովն, և յետոյ ի՞ր փողի, նրա՛ արծաթը, սա ի՞նչ գաւառի լեզուով է արգիօք: Մեք ունինք Հրամայական խոնարհումն, գնա, կորի՛, ուրեմն և ի՞ր ու նրա (Գերանուն) բառերն չէին հարկաւոր, այլ «սկտք էր ասէր, իսկ երրորդ դէմը՝ թող գնայ կորչի, կամ ասենք կորչէ, շեշտ էլ հարկաւոր չէր, այլ գնա բային՝ յ տառն սկտք էր կցել էր՝ երբ և հարկաւոր էին, ի՞ր, նրա բառերը: Այդնպէս հանգիստ, զով չէ Հայերէն, թէ և երևի նոյնայանգութեան համար է ստիպուած, բայց չունի միտք: Փոքր ինչ յետոյ ասում է:

«Թող կորչէ տէր Մարկոս, նա մի
քուրմ է կեղծաւոր... Եւն,»:

Ես անդ ևս սկտք էր ասել կորչի առանց շեշտի: Չասենք էսպէս յայտնի, առանց բառերը որոճելոյ, յարձակուիլն եկեղեցականի վերայ, անվայել է կրթիւղ մարդի: Ահէք վերոգրեալ տողերէն յետոյ ի՞նչ վսեմ բառեր է շարունակում:

«Բանի ազգու յայտնութիւնը,
օրքան անոյշ հրապոյր,

Երբ քաղում է իմ թըշէն, մի վար-
դենի տաք համբոյր... Եւն,»:

Թող բարեխիղճ ընթերցողն ասէ, էս տունը համապատասխանում է արգիօք կամ յարմար է նախընթաց տունների բառերին, մտքին ու ոճին, կամ կարելի է էսպիսի բանաստեղծութիւնը թոյլ տալ համբաւներին ու օրիորդներին կարգալ, թէ չտեսնեք պատուելի չափահասներին:

Պարոն Բաֆֆին թէ իւր ընդաբոյս
 հանձարովն և կանոնաւոր լեզուովն էր բա-
 նաստեղծել, հաւանական է որ՝ ընդու-
 նելի լինէր նրա «Փունջն», բայց ամսոս
 շատ տեղ ուժէ տուած բառերի վսեմու-
 թեանը, կամ մտքին, որ մեր ազգի աւան-
 դութեանը, ներկայ սովորութեանը, ճա-
 շակին ու ոգւոյն չեն պատկանում, չեն
 էլ համապատասխանում մեր ժամանա-
 կին. էստուց եզրակացնում է որ, հեղե-
 նակը չունի բնական բղխումն, արտադ-
 րումն ջերմ ոգևորութիւն, վասն որոյ և
 նրա բանաստեղծութիւնները չեն տպա-
 ւորվում ընթերցողի մտքումը, սրտումն,
 և չեն էլ նրան զբաղեցնում: Շատ ան-
 գամ տեսնում ես մի գուհիկ, կուպիա,
 բանաստեղծից, թէ կուգես ասենք աշտ-
 անի կնիսի բարձր մտքեր, բայց անպաճոյճ
 բառերով են բղխում, որ լսելիս՝ անմո-
 ռաց մնում են և դրոշմվում մարդի մը-
 քումը: Օրկուած է էստուց «Փունջն»,
 Բանաստեղծը պէտք է պարզեւտրուած
 լինի բնութենէն, և ընդունակ առ ի ինք-
 նարեւարար արտայայտել բնութեան քըն-
 քըշութիւնն, և էն էլ պարզ, անսխ-
 ւեթ և ողորկ ոճով, ինչպէս տեսնում ենք
 Է. Մելանեանի, պարոն Պատկանեանի և
 քանի մի այլոց յայտնի բանահիւսու-
 թիւնների մէջին: Իս տեղ յառաջ բի-
 րենք անուսում, մաշկաւոր Ադամ Ազ-
 բարի «Ասում ես դիմացիքի», երգէն քա-
 նի մի տունն, որ զմայլացնում է մարդիս
 հոգին և թողնում է նրա մտքումն իւր
 անջնջելի հետքը, զոր օրինակ:

«Ղախտ որոտում ես վախտ ամ-
 պում ես, վախտ մթնում ես
 շատ, անձրեւում ես կաթ կաթ,

Ղախտ հարաւային հոգմի նըման,
 հնչում ես խիստ սաստ,
 ես ընում եմ ըզգաստ.

Ղախտ բարկանում ես, վախտ նի-
 դանում, կամենում ես ինձ չար,
 սարսափում է աշխարհ . . .

Պամ նրա միւս երգը, Մո-խաֆաղ ա-
 նուանեալ, ինքեան պատկանեալ եղանա-
 կին յարմարացրած առանց տաղաչափու-
 թեան, որ սուրբ սիրոյ համար է ասած:

«Բարի սէրն ինչ ժամանակ որ շարժէ,
 Ամէն երկիւղն էլ ի բաց կը մերժէ,
 Խաղաղութիւն բարութեան հետ կվարժէ,
 Աստուածային տեսութեանը կու արժէ:

Ընմահ արքայութեանը,

Խղեմային դրախտի տանը.

Խղեմ դրախտը մէկ դամար է,

Լոյսը միշտ վրէն խաչաձև կամար է:
 Բարի սէրը նախ առաջ հարկ է երկնաւոր
 տէրին,

Խրկորդապէս քոյ անձին,

Լնպէս էլ քո ընկերին.

Ընկերիդ ինչ որ կամենաս,

Առաջ պէտք է իմանաս,

Աստուածանից կը ստանաս,

Չարին չար, բարւոյն բարի փոխա-
 րէն,

Ընմահական աշխարհումը,

Մեր վերջի դարումը . . . Լէն,»

Տեսէք ի՞նչ պարզ, անպաճոյճ, գոր-
 ծածական և ամենէն դիւրին հասկանալի
 բառերից է բաղկացած էս հոգևոր — փի-
 լիսոփայ — բարոյական բանաստեղծու-
 թիւնը, բղխում անուսում մարդի սըր-
 տիցը, չունիլով ոչ ինչ սեթեւութիւն
 և առանց ուրիշ ազգի հոգւոյ և մտքի ազ-
 դեցութեանը:

Արդէն ինքը Վերթողը նստած Բա-
ղէշ, գրում է Օւէյթունցի կնկայ ողբը,
(տես Փունջ, երես 163), ի՞նչ բարբա-
ռով, ի հարկէ ըստ ամենայնի անհասկա-
նալի Օւէյթունցւոյ. կամ թոյլ տանք
միւս պակասութիւններն, արդեօք էն ու-
ճը, բաւերը կը պատկանի՞ մի անտառում,
լերանց մէջը կամ կատարների վերայ և
վայրենի հասարակութեան մէջին ծնած,
սնած կնկայ, — որ այնպիսի գազափար չի
ունենալ իւր հայրենիքի մասին. նոյնպէս
էլ պէտք է ասած, Օրօրոցի երգի համար,
որ Օւէյթունցի Հայ տիկնոջ բերանումն
է դրած (երես 138): Այս չէ՞ր, արդեօք,
որ պարոն Բաֆֆին էս երգն ու ողբը յի-
րիւրիւնէր Աւրոպայի ծնած, սնած և կամ
էն անգի հողով կը թուած հայուհւոյ
բերանումն, և կամ թէ գրել էր Օւէյ-
թունցւոյ բարբառովը (թէ տեղեակ էր
նրան), որ աւելի բնական և զգալի կը լի-
նէր, ինչպէս Տուղայեցւոյ երգն, որ սկը-
սում է էսպէս:

«Ափսոս քեզ Աստուծոյ խեղճիկ ժողո-
վուրդ,

Վերի գնամանաք անմեղ անխոր-
հուրդ . . . և ինչ, :

Պռապել է պարոն Բաֆֆին կամ թէ
չէ լսած երևելի առածը թէ, երեխայի
հետ խօսողը, պէտք է երեխայանայ, այս
ինքն նրա լեզուովը խօսէ: «Փունջի», ա-
մենագովիլին (ըստ յօդուածի՝ որոյ մոռա-
ցել եմ անունը, Մշակ օրագրումն) է տա-
ղաչափութիւնը «Վայեակ», երես 285,
որ ծծկեր երեխային կօրօրէ ու վերացա-
կան բառերով կերգէ, — ի՞նչ, — լսէք:

«Այն տեղ նստած էր պառաւ լա-
յեակը,

Աւ օրօրում էր քնած զաւակը,
Մերթ յօրանջելով և մերթ նիրհե-
լով,

Աղանակում էր երգը երգելով . . . :

Ու՞մ զաւակը, — անշուշտ գայեակինը
չէր, ուրեմն և չէ կարելի ասել «զաւա-
կը», վասն որոյ և պարտ էր Վերթողն
ուրիշ բառ որոնէր նոյնայանգութեան
համար և չբռնաբարէր իւր քերթողու-
թիւնը: Նիրհելով չէր կարող օրօրել և
երգել, էն էլ եղանակով, և եթէ քնած
էր զաւակը, ու՞մ համար կերգէր զաւակի
խրատները: Այս էլ բնական չէր, ըստ ո-
րում աննեղաշնակ կը լինէր, ուրեմն և
անհանգիստ կանէր զաւակին, այս ինքն
երեխային: Այ՛նք, ի՞նչ է նրանէ յետոյ
շարունակում:

«Աչքդ փակի, իմ աղանեակ, այդ
աչքդ վառվռուն . . . , :

Վերն կասէ քնած, էտեղ կասէ փա-
կի աչքդ: Այսպէս կամ էնպէս, չունի թէ
և միտք, այսու ամենայնիւ պէտք էր գրել
էր փակէ՛ կամ փակիր՝ և ոչ թէ փակի:
Նոյնպէս առաջին տողումն աչք, երկրոր-
դումը կը կնկելով աչքդ, որքան և աւել-
լորդ կը կնկութիւն. բայց մի և նոյն տան
մէջը, մի և նոյն բառը զանազան գաւառ-
ների բարբառով կարելի է արգեօք: Այ-
նպէս կցկտուր և անբնական մօքեր ու
գաղափարներ մէջ բերելէն յետոյ, կասէ
պառաւ գայեակն:

«Արբ որ մանելու լինես, կեանքի
մէջ աշխարհային,

Պատուէ ծերի Դոստիքը, լսէ Դոս-
տոյա խրատին.

Պաշպանիր Դոստիքը պապերի, օրէնք
ու աւանդութիւն,

Պլուսոգ ծռէ՛ք եղնից մեծին, չու-
նենաս հպարտութիւն . . . ,:

Ո՛րքան և էս տողերն ըստ ամենայնի
անբարմար են նրանցից առաջ ասածների
մօքին, էնքան էլ երեք անգամ Դո- բա-
ռը կրկնեն և հպարտութիւն բառն ան-
տեղի էին էստեղ. բաց ի սորանէ վից տուն
բանահիւսութիւններէն յետոյ, մոռանա-
լով ի հարկէ իւր էդ խրատներն, ինքն
ինքեան հակառակաբանում է, դնելով ե-
րիտասարդ, ի հարկէ տղամարդի, օրօրողի
բերանումն, — ի՞նչ, — լսէք:

“Մի՛ հեռեւիր դու փառք, հնաքառք, յե-
մար պապերիդ Ժո-ռ օրինակին.

Մի՛ յարմարիր քո մանուկ ու ժելը, դու
էսանդամու նոցա ճաշակին.

— Օ՛ր նոցա անշարժ մօքի ծնունդը,
խաւար կեանքի է արտադրութիւն:

Եւ հերոսական դառն ատելութեամբ,
նախապաշարմանց դու փշրէ շղթան,:

Մի և նոյն երգի մէջն էսպիսի՝ խոշոր
հակասութիւն: — Բանաստեղծութեան
մի տուն մէջին ասելը, “պահպանիր պա-
պերիդ օրէնքն ու աւանդութիւնը, . . . իսկ
միւսի միջին թէ “Մի՛ հեռեւիր դու փը-
տած, հնաքառ յիմար պապերիդ ծուռ
օրինակին, և ին: Երեխէն Պարոն Բաժ-
ֆին ո՞ր սկզբունքն, ուղղութիւնն ըն-
դունէ: Բնօթխակ է որ “դայեակ, երգի

մէջին ոչինչ բնական չկայ, բաց ի երեխայի
ծւալէն, ճշալէն և զարթնելէն:

Զէ՛ արդեօք խստութեամբ մեղանչել
ընդդէմ պատմաբանական ճշմարտու-
թեան, աղաւաղելով խանգարելով իւր
ընտրեալ ժամանակի սովորութիւնները,
բարձր, վարձր, զգեստը և զէնքը ու նը-
մանացնել ներկայ կամ այլ և այլ դա-
րերի ժամանակին: “Փոռնջի Արա, եր-
գը թէ չէր աղաւաղուած և խանգարուած
քանի մի տեղ մտացածին բառերով կամ
մօքերով, կարելի էր ասել որ, ամենի
վերայ յաջող տաղաչափութիւնն էն էր:
Արդեօք Արայի ժամանակն ունէի՞ն Հա-
յիրը փեռադարդ սաղաւարտներ, ար-
ծուանիշ շքանշաններ, գոհարեղէն քա-
մար այս ինքն կամար, ոսկէթել վրաններ:
Ո՞ր պատմութիւնից ուրեմն վեր առաւ
պարոն քերթողն էս բառերը, թող նա
կարգայ վիպասանական բանաստեղծու-
թիւնը Պարոն Վիլլապատեանի (զոր ա-
ւելորդ չեմ համարում էստեղ զաղա-
փարել, ըստ որում դեռ ևս չէ հրատա-
րակուած) և համեմատէ Խորենացւոյ
պատմութեան հետ թէ, ինչպէս է քեր-
թողը զգուշութեամբ վարուել, որպէս զի
աւելորդ բառ չմիջանկուրի և ամենը բնա-
կան և պարզ լինի, զոր օրինակ՝

ԱՐՏԱՇԷՍ ՄԱՆՈՒԿ

ԵՆ

ՍՈՒՆԻԿ:

“Կոր Կոր առ Եր Բուլէ . . . երբէ եղանակէ:

Ո՞ր մոլոր Աուրն էր դալիս, Աովկաս սարերէն,
Մին աննման ձայն էր տալիս, էն միւս ամիերէն.

— Փախէք աստղեր, արեւ ծագեց Աովկաս սարերէն,

Սաթինիկն եմ, սիրուն եմ ես երկնից լուսնիակէն.
 Հայոց քաջեր, քաշ զրէք զէնքեր շուտ ձեր ձեռերէն.
 Սաթինիկն եմ, կը յաղթուիք դուք իմ սիրոյ սրէն:
 Վեզ եմ ասում, քաջ Արտաշէս, դուրս եկ վրանէն.
 Սաթինիկն եմ, կը յաղթուիս, իմ սե սե աչքերէն:
 Տաք տաք արիւն զուր մի՛ թափեր անմեղ սրտերէն,
 Սաթինիկն եմ, կը յաղթուիս իմ կարմիր թշերէն:
 Մի՛ պարծենաւ քո զօրքերի պէսպէս գունդերէն.
 Սաթինիկն եմ, կը յաղթուիս իմ սիրուն ունքերէն:
 Մի՛ խրոխտար քո յաղթական սէզ սէզ քայլերէն,
 Սաթինիկն եմ, կը յաղթուիս իմ փունջ փունջ մազիւրէն:
 Բաց շուտ շղթայն գերի բռնածդ եզբօրս ոտներէն,
 Սաթինիկն եմ, կը յաղթուիս դու իմ բլբուլ լեզուէն.
 Վէն մի՛ պահիր, վրէժ մի՛ ուզեր իմ Աւաններէն,
 Բարձր է Աովկաս, քաջ են ալանք Մասեաց քաջերէն:
 Չայն եմ տալիս, ձայն տուր ձայնիս քո խոր բանակէն,
 Դուրս եկ մէյդան, թէ չես վախում սիրոյս նետերէն:
 — Աւան, Աւան, յաղթութիւնս առիր իմ ձեռէն.
 Ո՞նց դիմանամ, հալվում է իմ թուրքս քո կըրակէն:
 Աւան, Աւան, փառք ու պսակս տարար ինձ գլխէն.
 Ո՞նց դիմանամ, սիրուն ես դու մեր սիրուններէն:
 Այ դու անգութ, երվում է սիրտս քո չար ծարաւէն,
 Ո՞նց դիմանամ, չեմ հովանում Աուրի ջրերէն:
 Տուր ինձ թեւեր, քո մօտ թռչնեմ Աուրի վերայէն.
 Մին թիթեռնիկ դարձայ ես, քո ճրագի լոյսէն:
 Հազար կտամ տան հազար իմ անթիւ գանձերէն,
 Վեզ ինձ կառնեմ հարս-թագուհի քաջ Աւաններէն:
 Ոսկւոյ անձրեւ շախ կը տամ ես գլխիդ վրայէն,
 Այլ կը գնայ մարդարտէ քո ոտի տակերէն:
 Կը թափեմ Աուրը լայքա, ոսկի, կարմիր մորթերէն,
 Ծածկուի գետը ընծայարիւր բարձած ուղտերէն:
 — Եսաց հեծաւ արի արքայն սեն իւր ձիւրէն,
 Արծուի նման ձիւց անցաւ Աուր գետի մէջէն:
 Հասաւ հանից իւր կարմիր թօկ, օղըն ոսկիզէն,
 Չգեց ընկաւ Սաթինիկի մէջքի մէջտեղէն:
 — Թափր փախիր իմ գեղեցիկ սե ձին հրեղէն,
 Մէջքիդ մսուալն որս եմ բռնել Աովկաս սարերէն:

Թագիր փախիր, մեծն է սա իմ բոլոր որսերէն,
Թեւիզ վրի կոյսն եմ խլել քաջ Ալաններէն:

Բանաստեղծ--Բիւն Սահ-էն Գեւորգիան, 1877 թ. Բեբե 8:

Բանաստեղծութեան գերազանցութիւնը կայանում է ոչ նրանում, որ նոյնահանգ է կամ թէ բառերի շարամանութիւնը կատարեալ է, այլ նրանում՝ երբ բանաստեղծը կարողանում է իւր ձեռնամուխ եղած առարկայն նկարագրել իսկութեամբ, ինչպէս է կամ էր էն ժամանակումը, ինչպէս ստեղծել է թնութիւնն, որ շատ բարձր է քան զամենայն մարդկա-

յին կարողութիւնն. ընդհակառակը էն կորցնում է իւր յարգանքն:

Եթէ «Փունջի», պարոն հեղինակն արդարացնում է հեղինակի կոչումն, ի հարկէ չի վշտանալ էս իմ հարեանցի նրկատողութիւններէն, և կաշխատէ ջրել իմ կարծիքները հաստատուն փաստերով:

ԳԱՆՈՒՅՑ ՇԻՐՄԱՋԱՆԵԱՆ.

Ի Թաւրէշ:

ԱԶԳԱՅԻՆ

Վ.Ե.Ը. ՀԱՅՐԱՊԵՏ.

Յառաջակայ Սեպտեմբեր ամսոյ սկիզբներում Վ.Ե.Ը. Հայրապետ ի Բիւրակահէ պիտի վերադառնայ այսր ի Մայր Աթոռս:

ԳԱՎՐԻԺՈՅ ՀԱՅՈՑ

ԱԶԳԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՎԵՐԱՑ.

Գեր. Անդրէաս Արքեպիսկոպոս՝ քաջ զգալով իւր պարտաւորութեանց և հոգոց մէջ՝ նախամեծարը, և ստանձնած վիճակին մերազնեայ մանկուոյն դաստիարակութեան և կրթութեան ամենակարեւոր պէտքը և նշանակութիւնը, ինչպէս որ ի Վ.Ե.Ը. Հայրապետէ հրաման և հրահանգ ընդունած էր, ի Գալբէժ հասանելէն մի քանի օր զկնի՝ իւր ուշադրութիւնը նուիրած է վիճակին կեղ-

րոնն եղած քաղաքին Հայոց Ազգային Ուսումնարանի դրութեան վերայ, և առանց յապաղելոյ ձեռնարկելով նորոգ Հոգաբարձութեան ընտրութեան, առաջարկած էր ի հաստատութիւն առ Վ.Ե.Ը. Հայրապետ. զոր և Վ.Ե.Ը. Հայրապետ Օրհնութեան Առնդակաւ հաստատելով՝ յորդորած և խրախուսած էր ստանձնած պաշտօնները արթնութեամբ կատարել և արդիւնաւորել:

Արդ կիսութամբ աւետել, զի նորընտիր Հոգաբարձութիւնն ևս Գեր. Առաջնորդի հետ ի միասին՝ համամտութեամբ և փոխադարձ աջակցութեամբ ոգևորեալ նախ և յառաջ Ուսումնարանի նիւթական ապահովութիւնը լրացնելոյ սկսած և յաջողած են բաւական մեծ գումար հաւաքել, ինչպէս առ Վ.Ե.Ը. Հայրապետ մեր յայտարարած է Անդրէաս Արքեպիսկոպոսն, յորմէ արժան կը համարուիք